ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 146

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Լիճք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Մարտունի համայնքի (Լիճք բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքը (Լիճք բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (Լիճք բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-039-0023-0016 կադաստրային ծածկագրով 0.118 հա մակերեսով բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր	05-039-0023-0016 կադաստրային ծածկագրով 0.118 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Մարտունի համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Լիճք բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի (Լիճք բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «13» «մայիսի» 2025 թ.